

ՆԵՐԱԿԱՅՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶԿԻ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ

Ներակայման հասկացությունը միաժամանակ գոյություն ունի մի քանի գիտություններում, ինչպիսիք են տրամաբանությունը, հոգեբանությունը, գրականագիտությունը, լեզվաբանությունը:

Ներակայման հասկացությունը լեզվաբանության մեջ է թափանցել տրամաբանությունից և հաստատվել այնտեղ:

Հարկ է նշել, որ «Ներակայություն» տերմինը բազմանշանակ է, ընդ որում այն տարիմաստ է ոչ միայն վերոհիշյալ գիտություններում, այլև դրանցից յուրաքանչյուրի ներսում: Միաժամանակ արձանագրելի է այն փաստը, որ վերջին շրջանում լեզվաբանության մեջ կտրուկ կերպով աճել է հետաքրքրությունը ներակայման հասկացության նկատմամբ*:

Նախքան ֆրանսերենի տարբեր մակարդակներում ներակայման դրսևորումների մասին խոսելը, փորձենք երևույթը բնութագրել լեզվաբանության տեսանկյունից, որտեղ, ընդհանրացված ձևով, ներակայումը դիտարկվում է որպես ձևի և բովանդակության միջև անզուգաչափության դրսևորում:

Ներակայման հասկացության տեսական հիմքը Պրագայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչ Ս. Կարցևսկու լեզվական նշանի անհամաչափության մասին արտահայտած գաղափարն է: Իր «Լեզվաբանական նշանի անհամաչափ դուալիզմի մասին» աշխատությունում¹ Կարցևսկին լեզուն դիտում է որպես նշանային մի համակարգ, որ տատանվում է ընդհանուրի և առանձինի, վերացականի և թանձրացականի միջև: Ըստ նրա լեզվական նշանի երկու կողմերը նշանակիչը և նշանակյալը, կոնկրետ գործածության մեջ հանդես են բերում հակասական միտումներ:

ա) նշանակիչը ձգտում է հանդես գալ իրեն հատուկ գործառություններից տարբեր գործառություններով և դրանով իսկ դառնում է համանունային շարքի անդամ,

բ) նշանակելին ձգտում է արտահայտվել իրեն հատուկ նշանակչից (արտահայտությունից, հնչյունական ձևից) տարբեր միջոցներով և դրանով իսկ դառնում է հոմանշային շարքի անդամ:

* Տես Ս. Գ. Աբրահամյան, Ներակայումը և հայոց լեզվի զարգացման մի քանի հարցեր, «Լրաբեր հասարակական գիտությունների», ԳԱՍ, 2001, N1, էջ 3-16:

Լ. Գ. Բրուտյան, Ներակայման տեսության հիմունքները, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2002, 169 էջ:

Վերցնենք ֆրանսերեն *ours* (արջ) բառի օրինակը, որը փոխաբերական իմաստով կարող է նշանակել «չշփվող անձնավորություն» և համարվել *misanthrope* (մարդատյաց), *sauvage* (անմարդամոտ) բառերի հոմանիշը: Մի կողմից այս բառն իր տարբեր իմաստներով ստեղծում է համանունային շարք՝ նույն հնչյունական կազմով արտահայտելով տարբեր իմաստներ, մյուս կողմից, իր ոչ սովորական իմաստով դառնում է հոմանշային շարքի անդամ:

Ա. Վ. Բոնդարկոյի ըմբռնմամբ ներակայումը լեզվաբանական այն երևույթն է, որի դեպքում ասույթի բոլոր իմաստաբանական բաղադրիչները լեզվաբանական միջոցներով արտահայտված չեն, սակայն բխում են արտակա (բացահայտ, էքսպլիցիտ) բաղադրիչներից², այսինքն ներակայում է համարվում խոսքային շղթայի մեկ տարրի ծնունդը նրա հարևանությամբ գտնվող մյուս տարրերից:

«Ներակայումը լեզվի գոյությանն ուղեկցվող, նրանից անբաժան երևույթ է, որ հանդես է գալիս նրա իմաստակիր (բառային, շարահյուսական, ձևաբանական, և այլն) մակարդակներում դրսևորելով յուրաքանչյուր մակարդակի բնույթով պայմանավորված յուրահատկություններ: Այն հանդես է գալիս նաև խոսքում, հատկապես նախադասությունների կապակցության մեջ»,- գրում է ակադեմիկոս Ա. Աբրահամյանը³:

Այսպիսով պարզ է դառնում, որ լեզվի տարբեր մակարդակներում զանազան իմաստներ կարող են արտահայտվել ներակա ձևով, այսինքն առանց այդ իմաստին հատուկ արտահայտության միջոցների:

Նախ խոսենք բառային մակարդակում դրսևորվող իմաստային ներակայման մասին: Այստեղ ներակայումը հատուկ է բաղադրյալ բառերին, որոնց իմաստները սովորաբար բխում են այդ բառերի բաղադրիչներից, այսինքն բառի ներքին ձևից: Սա նշանակում է, որ բառիմաստը իմաստաբանորեն պատճառաբանված է:

Սակայն միշտ չէ, որ բաղադրյալ բառի ձևական արտահայտությունից հնարավոր է բխեցնել բառիմաստը: Ավելի հաճախ արտակա արտահայտված իմաստը զուգորդվում է ներակայմամբ արտահայտվող իմաստով: Ասվածը կարող ենք քննարկել *porte-avions* բառի օրինակով: Այս բառի երկու բաղադրիչները *porte* (կրել, տանել) և *avion* (ինքնաթիռ, օդանավ) ինքնին չեն արտահայտում *porte-avions* (ավիակիր, սավառակակիր նավ) բառի իրական իմաստը: Այս բառի իրական իմաստը հետևյալն է՝ „Grand bateau de guerre dont le pont supérieur constitue une plate-forme d'envol et d'atterrissage pour les avions„ (Մեծ ռազմանավ, որի վերին կամրջակը ծառայում է որպես ինքնաթիռների թռիչքի և վայրէջքի հենահարթակ) (Le Robert): Այս բառ-իմաստի ամբողջականացման խնդրում օգնության են հասնում իմաստային ներակա բաղադրիչները:

Ներակայումը կարող է նաև հանդես գալ բաղադրյալ ածականական կազմություններում, որոնց երկրորդ հիմքի ածանցն իր իմաստով վերաբերում է նաև նախորդ բաղադրիչին, թեև նրանում գործածված չէ: Anglo-français ածականական կազմության մեջ ներակայված է anglais ածականի -ais ազգություն, ծագում ցույց տվող ածանցի իմաստը(anglais-français): Երբեմն պատահում է այնպես, որ բաղադրյալ ածականի բաղադրիչներն ունենում են տարբեր ածանցներ (օրինակ՝ -ais և -ien), որոնք ունեն համանիշ իմաստներ, և բաղադրիչների միավորման դեպքում վերջին ածանցի իմաստից ենթադրվում է նաև առաջին բաղադրիչի իմաստը: Օրինակ՝ anglo-italien(anglais-italien), franco-arménien(français-arménien)։

Այսպիսով, բաղադրյալ կազմություններին համապատասխանող իմաստը ներակայման շնորհիվ կարող է արտահայտվել առավել սակավաբաղադրիչ կազմություններով, ինչը լեզվական նշանի տնտեսման սկզբունքի վկայությունն է:

Ներակայումը դրսևորվում է նաև բառակապակցությունների մեջ: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ առավել ծավալուն, բազմաբառ կապակցություններից ձևավորվում են առավել սակավաբառ կապակցություններ: Հարկ է նշել, որ ներակայումը հաճախ այնպիսի չափեր է ընդունում, որոնք առաջացնում են ձևավորված բառակապակցության ուղղակի իմաստի անհամապատասխանություն արտահայտվող հասկացության հետ: Դիտարկենք *tailleur en couleurs* (գունավոր հեռուստացույց) բառակապակցությունը: Իրականում գունավոր է ոչ թե հեռուստացույցը, այլ հեռուստացույցով հեռարձակվող պատկերը: Ամբողջական անվանումը պետք է լիներ *tailleur transmettant des images en couleurs* (գունավոր պատկերներ հեռարձակող հեռուստացույց): Բառակապակցություններում ներակայմամբ կարող են հասկացվել նաև որոշ նախդիրների իմաստներ: Օրինակ *parler politique* կապակցությունում ներակայմամբ է ըմբռնվում *de* նախդրի իմաստը:

Իմաստի ներակայման երևույթը դրսևորվում է նաև փոխանունության մեջ: Հիշենք, որ փոխանունությունը մի առարկայի անվանումն է մյուսով, որոնք կապված են հարակցային հարաբերությամբ: Վերցնենք փոխանունության տեսակներից մեկով համըմբռնմամբ (սինեկդոխայով) առաջացած հետևյալ բառակապակցությունները *une mauvaise langue* (չար լեզու, չարախոս մարդ), *une bonne tête* (խելացի մարդ): Այս բառակապակցությունների իրական իմաստները չեն բխում նրանց բաղադրիչների իմաստներից, այլ ըմբռնվում են ներակայմամբ: Եթե փորձենք դրանք ցույց տալ արտակա միջոցներով, կունենանք ավելի բազմաբառ կառույցներ և տեսանելի կդարձնենք ներակայված իմաստները (*un homme qui a une mauvaise langue, une personne qui a une bonne tête*):

Ներակայմամբ են ըմբռնվում նաև «պարունակիչը պարունակյալի փոխարեն», «ստեղծագործողի անունը իր ստեղծագործության փոխարեն» սկզբունքներով կառուցված կապակցությունների իմաստները:

Օրինակ

Le pays est en guerre. (le peuple du pays)

Je lis du Balzac (les œuvres de Balzac)

Ce collectionneur a quelques Picasso. (tableaux de Picasso)

Վերջին երեք օրինակներում ներակայված են *peuple, œuvre, tableau* բառերի իմաստները:

Ներակայումը գործում է նաև նախադասության մակարդակում և որոշակի ազդեցություն ունի նրա կառուցվածքի վրա: Ներակայվել կարող են նախադասության տարբեր անդամներ, ինչպես նաև բարդ նախադասության բաղադրիչները: Նախադասության մակարդակում հանդես եկող ներակայումը չպետք է շփոթել զեղչման հետ: Ներակայման և զեղչման տարբերությունն այն է, որ եթե զեղչումը վերացնում է ավելցուկը և վերականգնվում է միանշանակորեն, ապա ներակայումը կարող է տարբեր մեկնաբանություններ ունենալ: Ուսումնասիրենք հետևյալ օրինակները.

-Tu préfères mon polo bleu ou mon polo rouge? - dit-il.

Elle répondit: „Le rouge., et tapa un mot de travers. (Les Eygletières-H. Troyat).

Այս երկխոսության մեջ հարցի պատասխանը պարունակում է զեղջում, որը պարզ երևում է ենթատեքստում և հեշտորեն կարող է վերականգնվել (Je préfère le polo rouge).

Զննարկենք մեկ այլ օրինակ, որը վերցված է Անրի Տրուայայի *Le Carnet vert* նորավեպից: Il rêva à ce Jean de Bize qui habitait avenue Foch (on sait ce que coûtent les loyers dans ce coin-là!) et il se permettait de semer quatre mille francs dans une allée cavalière.

Այս օրինակում կառույցի և բացականչական հնչերանգի միջոցով ներակա կերպով արտահայտվում է տվյալ թաղամասում բնակտարածության չափազանց թանկ լինելու փաստը: Այսպիսով, ինչպես պարզ է դառնում վերը շարադրվածից, ներակայումը դրսևորվում է ֆրանսերենի կառուցվածքային բոլոր իմաստակիր միավորներում, նաև խոսքային մակարդակում: Ուստի ներակայման ուսումնասիրությունը դառնում է հույժ կարևոր ֆրանսերենի մակերեսային և խորքային կառուցվածքների ուսումնասիրության գործում:

Գրականության ցանկ

1. Karcevski S. „Du dualisme asymétrique du signe linguistique„ CFS XIV.
2. Бондарко А. В. «Грамматическое значение и смысл» — Ленинград: Наука 1978.
3. Աբրահամյան Ս. Գ. «Ներակայումը և հայոց լեզվի զարգացման մի քանի հարցեր» - «Լրաբեր հասարակական գիտությունների», ՊՄԱ, 2001, N1: